

ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ. ՀԱԿԻՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ա. Վ. Հակոբյան

Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների
խմբի Վարչական գծով տնօրեն (www.aiprg.net)

ԵՊՀ Հոգևր. տնտեսության և պատմության
ամբիոնի ասպիրանտուրայի հայցորդ

Հոգևոր կյանքի (ինչպես անձնային, այնպես էլ հասարակական մակարդակի) և անձի հոգեկանի մասին գոյություն ունեն բազում մեկնաբանություններ: Եվ չնայած այս հանգամանքին, գրեթե միշտ առկա են անաորոշություններ՝ կապված այս հասկացությունների իմաստի հետ: Այս խնդիրը մասնավորապես վերաբերում է «հոգևոր»-ին: Մի գուցե դրա պատճառն այդ հասկացության վերացականության բարձր մակարդակն է: Այդ իսկ պատճառով, մինչ բուն խնդրին անդրադառնալը, ցանկալի է հակիրճ կերպով դիտարկել թեմայի այս առանցքային հասկացությունը: Ստորև ներկայացվում են երկու մեջբերումներ, որոնք մի կողմից նկարագրում են «հոգևոր»-ի էությունը, մյուս կողմից ի ցույց դնում դրա կարևորությունը մարդու համար. «Ամենօրյա գիտակցության մակարդակում հավանաբար դժվար չէ բնութագրել հասարակության **հոգևոր կյանքը**: Կրթական հատուկ պատրաստականություն պետք չէ հասկանալու համար, որ մարդն ու մարդկային հասարակությունը միայն նյութական արժեքներով չեն ապրում, որ գործարանների կողքին գոյություն ունեն նաև դպրոցներ ու բուհեր, ստեղծագործական միություններ և այլն: Դժվար չէ նաև նկատել, որ բանվորներից ու գյուղացիներից բացի հասարակության մեջ ապրում և ստեղծագործում են նաև մտավորականներ, արվեստի և գրականության ներկայացուցիչներ և այլն»¹:

«Հոգևորը կյանքի, առողջության, հոգեկանի և այլ բաների հետ մեկտեղ հանդիսանում է մարդու բաղադրատարրը: Դա այն է, ինչ տարանջատում է մարդուն մնացած կենդանական աշխարհից: Մարդու տակ հասկացվում է կենդանի էակ, որը տարբերվում է իր հոգևորի հատկությամբ (Ֆ. Էնգելս): Հոգևորն ակտիվ գործոն է, մարդն իր վարքում դեկավարվում է սոցիալական արժեքների (այլ մարդու, հասարակության, սոցիալական նորմերի, ինքն իր և այլն) նկատմամբ պատշաճ հարաբերության գիտակցմամբ, այսինքն այն բաների, որոնք կազմում են հոգևորի էությունը»²:

¹ Ա. Ա. Հովսեփյան, Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ, Երևան, 2003, էջ 135:

² А. А. Тер-Акопов. Духовность в механизме преступного поведения, <http://www.fondter-akopov.ru/index.php?Page=57>

Այս համատեքստում է, որ կենսական նշանակություն է ձեռք բերում այն հարցը, թե **ինչ է նշանակում լինել հոգեպես (ինչպես հոգեկան, այնպես էլ հոգևոր իմաստով) անվտանգ**: Եվ արդյոք, անձն իրեն անվտանգ է զգում, երբ կատարում է նման հարցադրում, թե՛ երբ ընդհանրապես չի էլ դիտարկում այս խնդիրը: Այլ կերպ ասած, կարելի է առանձնացնել հոգևոր և հոգեկան անվտանգության երկու կադապարներ կամ վարքագծեր. **1. Անձը գիտակցաբար զգում է իրեն անվտանգ**, երբ անձին տրվում է ընտրելու հնարավորություն, ինչպես նաև ընտրության տարբերակների բազմազանություն ընտրելու այն հոգևոր սնունդը կամ հոգեկանի զարգացման ոլորտը, որն ինքն է համարում անվտանգ: **2. Անձը չի գիտակցում և չի մտածում դրա մասին**, երբ անձին պարզապես հրամցվում է որոշակի հոգևոր սնունդ, դրա մասին նա չի գիտակցում, զգում է իրեն ապահով և վստահ: Չկա այլընտրանք, այլ ռեալություն, որը կսասանի նրա առկա վստահությունն ու հոգեկան անդորրը: Սա հիշեցնում է այն դաստիարակությունը, որը պետք է մատուցվի զինվորների դասին պատոնյան ուտոպիական պետության մեջ:

Եթե վերանայենք այս կադապարները, ապա կտեսնենք, որ դրանց միավորում է մի (բայց ոչ միակ) կարևոր գործոն: Երկու դեպքերում էլ, անձն իրեն անվտանգ է զգում նշված իմաստով միայն ի շնորհիվ **անվրդովության վիճակի**: Ըստ այդմ, անվրդով վիճակը (անդորրը) հանդես է գալիս որպես հոգեկան և հոգևոր անվտանգության չափանիշ:

Այս տեսնակյունից անվրդովությունը հատուկ է ինչպես առաջին կադապարին (անձը չի վրդովվում, կարող է ընտրել այն հոգևոր սնունդը, որ կարծում է իրեն պետք է), այնպես էլ՝ երկրորդ (անձը չի տեսնում հայելուց այն կողմ, չունի անհանգստանալու առիթ, չկա A, որովհետև չգիտի A-ի գոյության մասին, դրա՝ իրեն հրամցվողից ավելի լավը լինելու մասին, չի խախտվում նրա անվրդովությունը):

Բայց հատկապես հենց առաջին կադապարին հատուկ է նաև վրդովմունքի, անվտանգ չզգալու զգացումը: Եթե բազմազանությունը անվտանգության չափանիշ է, հոգեկան և հոգևոր անվտանգության պաշտպանության եղանակ, ապա որո՞նք են բազմազանության մեջ կողմնորոշվելու չափանիշները: Ինչպե՞ս տարբերակել ճիշտ հոգևոր սնունդը կամ ճիշտ հոգեկան դաստիարակությունը սխալից, ինչպես չմոլորվել և չխճճվել: Այսինքն, առաջին տարբերակի դեպքում ընտրության պատասխանատվությունն ընկնում է անձի վրա, ի տարբերություն երկրորդի, երբ ընտրությունը կատարվում է դրսի օղակի կողմից և հրամցվում անձին:

Վերադառնանք երկրորդ կադապարին: Այն իր հերթին միանշանակորեն չի կարող դիտվել որպես անվրդովության, հոգեկան անդորրի և հոգևոր կայունության և այս ամենից բխող անձի հոգեկան և հոգևոր անվտանգության կադապար: Այստեղ պայմանականորեն պետք է առանձնացնել երկու մակարդակներ՝ **անձնային** և **բարձրադիր**: Անձնային մակարդակում անձը չի մտածում անվտանգության մասին, չկան դրա համար անհրաժեշտ

գործոններ, պատճառներ մտածելու, անհանգստանալու, խորհելու վտանգի մասին, հետևաբար մարդու հոգեկան և հոգևոր անվտանգությունն իսկապես ապահովված է: Օր. ԽՍՀՄ: Մարդիկ (իհարկե՛ն որոշ վերապահումներով) չէին էլ մտածում հոգեպես անվտանգ լինելու մասին, ինքստիներքյան դա պարզ էր: Հրամցվում էր կոնկրետ հոգևոր սնունդ, դաստիարակվում էր կոնկրետ հոգեկան (homo-sovetikus) և մարդը այդ կադապարներից դուրս չէր գալիս և չէր էլ տեսնում: Այ եթե՛ն դուրս գանք, վեր բարձրանանք ու բարձունքից դիտարկենք (բարձրադիր մակարդակ), մի անգամից կտեսնենք որ ոտնահարվել է մարդու ինչպես հոգեկան այնպես էլ հոգևոր անվտանգությունը, եթե՛ն իհարկե՛ն որպես անվտանգության չափանիշներ ենք դիտում ընտրության իրավունքը, այսպես կոչված «հոգևոր սննդի» բազմազանությունը:

Ի դեպ, երկու կադապարներն էլ գործառնում են և իրականություն են դառնում հենց կրթության միջոցով: Այս առիթով, արժե՛ն նաև նշել, որ առաջին կադապարը նման է մեր կրթական համակարգին, որտեղ ուսանողը պարտադրվում է սովորել իրամցվող առարկաները, իսկ երկրորդը՝ «արևմտյան»: Եվ վե՛ճը, այն հարցում, թե՛ն որն է ճիշտ, դե՛ռ երկար կշարունակվի:

Սույն հոդվածի հաջորդ նպատակն է ցույց տալ մեր իրականությունում այս կադապարների ներդրման, ըստ անձի հասունության դրանց համատեղման և աններդաշնակ համատեղումից ծագող ծանր խնդիրներն և հետևանքները:

Մարդն ինչ-որ իմաստով իր կյանքի ընթացքում բախվում է ինչպես առաջին կադապարի հետ, այնպես էլ՝ երկրորդ (դրանք հանդես են գալիս ինչպես գուգահեռաբար, այնպես էլ՝ հերթափոխելով մեկը մյուսին): Երբ երեխան ծնվում է, նրան հրամցվում է այն հոգևոր սնունդն ու հոգեկան դաստիարակությունը, որն անվտանգ է դիտվում նրա ծնողների կողմից: Թե՛ն որքանով է իսկապես դա անվտանգ, վստահելի կամ նույնիսկ ճիշտ, այլ խնդիր է: Խնդիրը նրանում է, որ երեխան ինքը դե՛ռ ընտրություն կատարել չի կարողանում և նրա ընկալունակ ուղեղն այսպես թե՛ն այնպես հրամցման կարիք ունի:

Սա հենց վերոնշյալ երկրորդ կադապարի անձնային մակարդակն է, որտեղ «A»-ի կողքին երեխայի համար չկա այլ «B»: Ձևավորելով որոշակի աշխարհայացք, արդեն լինելով ավելի հասուն և մուտք գործելով նոր ռեալություններ (բակ, մանկապարտեզ, դպրոց և այլն)՝ նա սկսում է կատարել որոշակի ինքնուրույն քայլեր (անցում դեպի երկրորդ՝ գիտակցական կադապար), ընտրել այս կամ այն երաժշտությունը, այս կամ այն հագուստը և այլն: Եվ ահա այս փուլում սկսում են ի հայտ գալ առաջին հակասություններն իրեն մատուցված անվտանգ «A»-ի և այլընտրանքային «B»-ի կամ «C»-ի միջև, որը ևս թվում է երեխային անվտանգ: «B»-ն կամ «C»-ն հենց այն բազմազան իրականություններն են, որոնցում կողմնորոշվելու համար (այսինքն՝ հոգեկան կամ հոգևոր անվտանգության չափանիշում չսխալվելու համար) անհրաժեշտ է մեծ զգոնություն և փորձ:

Բնականաբար լավագույն տարբերակը կլինեն այն, եթե մի կադապարից մյուսին անցնելու փուլն ընթանառ հնարավորինս հարթ: Սակայն, ավելի հաճախ մատուցված իրականության և այլընտրանքային (գիտակցական ընտրության ենթակա) իրականության միջև հակասությունները հանգեցնում են անձի մակարդակում հոգեկան երկատման, նկրողների և հոգևոր ճգնաժամների ու անկայունության: Օրինակ, դժվար չէ նկատել, թե երբեմն ինչպես է հայրենասիրական գաղափարներով կամ քրիստոնեական բարոյական ավանդույթներով ծեփված երեխան դպրոցի մի քանի տարիներից հետո գլխնիվայր փոխվում, տանը գործում այլ կանոններով, դրսում՝ այլ: Եվ սա լավագույն դեպքում, հաճախ այդ կանոնների և իրականությունների տարաբաժանումը պարզապես տեղի չի ունենում՝ բերելով իր հետ քառասյին և ճգնաժամային հետևանքներ ինչպես անձնային, այնպես էլ՝ հասարակական մակարդակում:

Նաշվի առնելով թեմայի ծավալուն բնույթը և դեռևս խուսափելով խիստ գնահատականներից և առաջարկներից՝ կցանականայի հետևյալ մեջբերմամբ եզրափակել սույն աշխատանքը. «Ազգերի և պետությունների ողբերգությունը, որպես կանոն, սկում է նրանց հոգևորի ավիրումից, ազգի գիտակցության մեջ խորթ գաղափարների, արժեքների և դրանց հասնելու անընդունելի միջոցների ներմուծմամբ: Այդ իսկ պատճառով հոգևոր անվտանգության ապահովումը առաջնահերթ խնդիր է, քանի որ այն արտահայտում է ազգի բարոյական ոգին, նրա՝ պատմական հարցեր դնելու և լուծելու ունակությունը»³:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ա. Ա. Հովսեփյան, Սոցիալական փոփոխության հիմունքներ, Երևան, 2003:
2. Воина и мир в терминах и определениях - Словарь: БЕЗОПАСНОСТЬ ДУХОВНАЯ, <http://www.voina-i-mir.ru/dicdefinition/?id=29>
3. Платон. Государство. В кн.: Древнегреческая философия. От Платона до Аристотеля, М., 2003.
4. А. А. Тер-Акопов. Духовность в механизме преступного поведения, <http://www.fondter-akopov.ru/index.php?Page=57>

³ Воина и мир в терминах и определениях - Словарь: БЕЗОПАСНОСТЬ ДУХОВНАЯ, <http://www.voina-i-mir.ru/dicdefinition/?id=29>